

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարւան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ք օ Ն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տ է Լ է Ք օ Ն № 253.

ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ 1900 ԹԻԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(ՉՏ-ՐԴ ՏԱՐԻ)

ԴՐԱՎԱՆՆԵՐԵՐ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹՆԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ. «Մ չ ա կ ի» տարեկան գինը 10 ռուբլի է, տաճն եւ մէկ եւ տաճն
ամսականը՝ 9 ռ., ինչ եւ ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ
ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. եւ մի
ամսականը՝ 1 ռուբլի:

ԱՐՏԱՍՍՀԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ա մ ե ռ ի կ ա յ ի բաժանորդները պէտք է
վճարեն տարեկան 6 ռուբլի. եւ ու պ ա յ ի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պ ա ռ ա կ ա ս ա ն ի
բաժանորդները 10 ռուբլի:

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՐԱՐԱԳՐԱՆԸ (Բաղադրայա եւ Բարձրակայա փողոցների
անկիւնը):

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, եւ առհասարակ նամակ-
ներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է գրել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакция
«МШАКЪ», իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Ջ Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Հետեւեալը չնայն է.—ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Թէոդորայից. Նա-
մակ Երեւանից. Ներքին լուր. —ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գաղաքական բարեգործութիւն-
ներ. Արտաքին լուր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.
— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.
Երգ բազէի մասին:

ՀԵՏԵԱՆՔԸ ՉՆՁԻՆ Է

Մի շարք գիտնական և արդիւնագոր-
ծական ժողովներում, որոնք տեղի ունե-
ցան վերջին տարիներս թէ Ռուսաստա-
նում և թէ արտասահմանում, առանձին
կերպով պարզվեց այն հանգամանքը, որ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԳ ԲԱՋԻՒ ՄԱՍԻՆ

(Մակար Գրիգորի)

Ծովը ներհում է:

Անգղիական փոխած ու ծովօրէն շունչ
քաշելով այստեղ՝ ափի մօտ, նա արդէն քնած
ու անշարժ է լուսնի կապուտակ շողով ու-
ղղով հեռաստանում: Թաւանման—կալուղ
եւ սեւ. նա միայնաւոր է այստեղ հարաւա-
յին կապուտ երկնքի հետ եւ խոր քուն է մը-
տել, ցրտացնելով իր մէջ փետրածեւ անշարժ
ամպերը, որոնք չեն սքողում աստղերի ոսկէ
նախը իրանց թափանցիկ հիւսուածքով: Եր-
կինքը կարծես քանի գնում աւելի ու աւելի
է խոնարհվում ծովի վրա, ցանկանալով հաս-
կանալ, թէ ինչ են չնջում անդադրում ալիք-
ները, քնած սողալով ափի ի վեր:

Լեռները, ծածկված հիւսիս-արեւելեան քա-
մուց տարօրէն ճկված ծառերով, չեղտակի թա-
փերով կարկանդակ են գազաթիւններ վերելում
տարածվող կապուտակ անապատի մէջ, եւ
որանց չոր ու բերտ եղբարձները կտր ձեւ են
ստացել, ամփոփվելով հարաւային գիշերի
չերեմ, փաղաքէն մշուշի մէջ:

Լըջօրէն—մտախոհ են լեռները: Նրանցից սեւ
ստուերներ են փովել ալիքների կանաչաւուն
չեղզ կատարների վրա, կարծէք ցանկանալով
կանգնեցնել այդ միակ շարժումը ու խնդրել
չրի անուր ծփոցը եւ փրփուրի հառաչը.—բո-
լոր ձայները, որոնք խախտում են գաղտնաբո-
հուր լուսնի լուծը, որ սփռված է չորս կողմը՝
զեւ սարերի ետեւում ծածկված լուսնի արծա-
թաշող ու կապուտակ փայլի հետ:

կանոնաւոր և խոշոր առաջագիմութիւն
անում է իր ամբողջ գործառնութիւնների
մէջ այն ազգը, որի մտաւոր զարգաց-
ման գործը գրված է հաստատ Տողի վրա:
Նոյն իսկ հասարակ արհեստների մէջ ընդ-
հանուր առմամբ յաղթութիւն տանում է
այն ազգը, որի կրթութիւնը կազմակերպ-
ված է լուրջ կերպով և որը օր օրի վրա
ընդարձակում է իր մտաւոր պաշարը:

Ճարածված է այն կարծիքը, որ հայե-
րը մեծ ձգտում ունեն գէպի կրթութիւն,
գէպի մտաւոր զարգացում: Գուցէ այդ
ձգտումը կայ, իբրեւ մի տեղանք, իբրեւ
մի իմը: Բայց ճիշդ է այն, որ իրապէս
մեր մտաւոր զարգացումը շատ ստոր ա-
տիճանի վրա է: Անցել է մօտ մի դար,
որ մեք սկսել ենք ծանօթանալ եւրօպա-

—Ա—ալլա—ա՛հ —աքընար... կամաց հո-
գոց է քաշում կրիմի հինաւորաց հովիւ Նա-
գիր—Ռահիմ-օղլին, շարունակ մեղամաղձիկ
արամաղղված ու հարաւային արեւից խոն-
ված, բարձրահասակ, ալիքարդ, չոր ու խոն-
տուն մի ծերուկ:

Ես ու նա պառկած ենք աւաղի վրա մի ա-
հաղին քարի մօտ, որ պոկվել է իր հարազատ
ստուերաթաթախ, մամուսապատ եւ չափազանց
տխուր ու խոփուկած սարից: Նրա այն կողի
վրա, որ դարձած է գէպի ծովը, ալիքները
լցրել են տիւր ու ջրաբոյսեր, եւ թւում է,
թէ այդ զանգուածը կապում է քարը նեղ ա-
ւազուտ հողաշերտի հետ, որ բաժանում է ծո-
վը սարերից: Մեր խարոյկի բոցը լուսաւորում
է գէպի սարը դարձած կողը, դողդոջում է,
եւ բազմաթիւ ցանցաձեւ ու խոր խոռոչներով
ճաքճված հինաւորաց քարի վրայով վազվզում
են ստուերներ: Թւում է, թէ քարը մտածում
է ու զգում...

Ես ու Ռահիմը ապուր ենք եփում նոր բըռ-
նած կապուտակներից և երկուսս էլ այն բա-
ցառիկ տրամադրութեան մէջ ենք գտնվում,
երբ ամեն ինչ թւում է տեսիլքակերպ, հոգի
առած, իր մէջ թափանցելու թողատու, երբ
մարդու սրտում այնպէս մաքուր է, այնպէս
թեթեւ և չը կայ ոչ մի ուրիշ բաղձանք, բա-
ցի մտածելու բաղձանքից:

Իսկ ծովը փարում է ափին, եւ կոհակները
հնչում են այնպէս փաղաքօրէն—մեղամաղձիկ,
ասես թողուտութիւն են խնդրում տաքանալու
խարոյկի մօտ: Երբեմն ծփոցի ընդհանուր ներ-
դաշնակութեան մէջ լավում է մի աւելի բար-
ձր խաղ, վերին աստիճանի չարածձի ու նեն-
գաւոր,—այդ՝ ալիքներից մէկն է, որ ուրիշ-
ներից համարձակ գտնվելով աւելի է մօտեցել
մեզ սողնաձի Ռահիմը արդէն համեմատու-
թիւն արեց ալիքների ու կանանց մէջ և

կան գիտութեան և գրականութեան հետ
և մինչև այժմ շատ քիչ արդիւնք ենք
տուել: Եթէ մենք ցանկանալու լինէինք
մի համառօտ հաշիւ տալու մեզ մեր ա-
րածի մասին, մենք կը սարսափէինք այն
չնչին հետեւանքից, որին մենք հասել ենք:
Մեր ընդհանուրութիւնը կատարեալ խաւա-
րի և ագիտութեան մէջ, մեր փոքրութիւ-
նեան զգեստները, որին մենք հասել ենք,
մեր գրականութիւնը փոքր և անապահով
վիճակի մէջ:

Եւ ինչ քաղաքակրթական մեծ գործերի
մասին կարող ենք խօսել մենք, երբ մեզ
պատել է մտաւոր ծուլութիւնը, երբ մենք
զեւ լուսնեք մտաւոր շահեր, բարոյական
հետաքրքրութիւն, երբ մեր ստացած կրթ-
ութիւնը ծառայում է միայն արտաքին
փայլի և եսական ձգտումների յագեցման:

Ամեն ազգ իւրաքանչիւր տարի տալիս է
խոշոր մտաւոր յաւելում իր անցեալի վրա
և զգում է, որ նա առաջ է գնում: Ի՞նչ
կարող ենք ասել մենք: Ո՛հ, եւ մեր մտա-
ւոր առաջագիմութիւնը: Եւ ի՞նչ ենք ա-
նում մենք մեր ժողովրդական մասնայի
մտաւոր զարգացման համար:

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Բիւսարիկ «արեան եւ երկաթի» քաղաքա-
կանութեան զոհերից մէկը, մի գերմանացի
անպէտքացած զինուոր, որի է կոմա Տօլստոյին
մի նամակ, որ սպված է Մօսկվայի «Курьер»
լրագրում: Այդ նամակը մի վերին աստիճանի
պերճախօս եւ սրտայոյզ բողոք է պատերազմի
դէմ, մի հասարակ մարդու սրտից բղխած հա-
ռայանք:

Յոյս ունեմ, կոմա—գրում է նա—դուք
թոյլ կը տաք ժողովրդի մի հասարակ մար-
դուն գիմել ձեզ կատարեալ վատանութեամբ:
Ես նոր միայն, պատահաբար, կարգացի քնա-
դատութիւն ձեր «Յարութիւն» անունով վե-
պի մասին: Ի՞նչ քաղաքաբար, ես հնար չունեմ
գնել գերքը, որովհետեւ մենք, վերաւորված

կառկած յայտնեց, թէ նրանք ուզում են գրկել
ու համբուրել մեզ:

Նա մեկնվել է աւաղի մէջ կուրծքն ի վայր
ու երեսը գէպի ծովը եւ խոնոն հայեացքով
նայում է պղտոր հեռաստանին, արմուկների
վրա կոթնած ու գլուխը ձեռքերի ափերին
յենած: Փրշոտ փափախը յետ է գնացել գէպի
ծակաւորին, որ ամբողջապէս խաղաղված է
մանր կնիճիներով: Նա փրկւածաշունչով խնդրե-
լի անում, առանց հարցնելու, թէ արդեօք լը-
սնւմ եմ ես նրան, եւ առհասարակ առանց ա-
մենաչնչին ուշադրութիւն դարձնելու իմ վրա,
կարծես թէ ծովի հետ խօսելիս լինի:

—Աստուծոն հետաւորիմ մարդը գնում է
գրխտա: Իսկ նա, որ չէ ծառայում Աստուծոն
եւ մարգարէին: Գուցէ նա հէնց այս փրփուրի
մէջն է... Եւ այն արծաթէ բծերը ջրի երեսին,
զուգէ էլի նա է... ո՞վ գիտէ:

Մի ծովը ուժգին թափանջվում է ու
սկսում է պարզվել: Տեղ-տեղ նրա երեսին երե-
ւում են անհոգաբար չաղ տուած շողեր: Լու-
սինը արդէն դուրս է սահել թաւուտ լեռնա-
կատարների ետեւից և այժմ մտախոհ կեր-
պով սփռում է իր լոյսը ծովի վրա, որ մեղմ
ծփում է նրան ընդ առաջ:

—Ռահիմ... մի հէքիաթ պատմիր...—լընդ-
րում եմ ծերուկին:

—Ինչո՞ւ,—հարցնում է Ռահիմը առանց դառ-
նալու գէպի ինձ:

—Այնպէս: Ես սիրում եմ քո հէքիաթները:
—Բոլորն արդէն պատմել եմ քեզ... էլ չը
գիտեմ...

Այդ կը նշանակէ, թէ ուզում է, որ էլի
խնդրեմ: Խնդրում եմ:

—Ուզում ես քեզ մի երգ պատմեմ,—համա-
ձայնում է Ռահիմը:
Ես ուզում եմ լսել հինաւորաց երգը, եւ նա

զինուորներս, մեք մասամբ շատ նուազ
ոտձիկ ենք ստանում: Եւ ահա ես, ինչպիսի-
զինուորս, ունեմ գէպի ձեզ, ագիւր կոմա,
մի խնդրեք, որ բղխում է խորին համոզ-
մունքից, հոգու խորքից: Գրեցէք, կոմա, մի
լաւ, զգացված հեղինակութիւն պատերազմի
դէմ: Նրա բովանդակութիւնը պիտի լինի.
«Պատերազմ պատերազմի դէմ»:

Ես մասնակցել եմ երկու պատերազմների
(1866 եւ 1870 թ.) եւ ատում եմ պատերազ-
մը իմ սրտի խորքից, որովհետեւ նա ինձ ա-
նասելի կերպով թշուառացրեց: Մենք, վերա-
ւորված զինուորներս, բոտ մեծի մասին ստա-
նում ենք այնքան ողորմելի ոտձիկ, որ
հարկաւոր է լինում ամաչել այն պատճառով,
որ մի ժամանակ մենք հայրենասէր ենք ե-
ղել: Ես, օրինակ, ստանում եմ օրական 80
պֆենինգ այն պատճառով, որ Սէն-Պրիվայի
պատերազմում, 1870 թ. օգոստոսի 18-ին,
վէրք եմ ստացել աջ ձեռքիս վրա: Մի որ-
սորդական շուն սրանից աւելի շատ թոշակ կը
ստանար: Եւ ասկայն ես ամբողջ տարիներ
տանջվել եմ երկու անգամ վիրաւորված աջ
թեւին պատճառով:

Եւ տանջանքները միայն ֆիզիքական չեն
եղել: Խեղճ զինուորը զարեւուր եփող էր,
պատերազմից յետոյ, ի հարկէ, աշխատելու ա-
նընդունակ դարձաւ: Բացի դրանից կինը, որին
նա սիրում էր ջերմ կերպով, ինքնասպանու-
թիւն գործեց, որովհետեւ տեսնում էր, որ
երբ ինքը պառուէ, սիրտի անկիւնոց մտնէ:
Սիրելի արարածի մահը այս աշխարհում միայ-
նակ թողեց խեղճ, անպէտքացած զինուորին և
նա սկսեց մտածել մարդկանց գործերի վրա:

Աշխարհում, ուր մարդիկ վազվզում են
կրթված գազանների նման և անընդունակ
են մի այլ միտք հասկանալ, բացի այն մտքից,
թէ պէտք է միմեանց յաղթել խորամանկու-
թիւններով մամոնայի համար, այսպիսի աշ-
խարհում թող ինձ համարեն խելաւո, բայց
ես այնու ամենայն, զգում եմ իմ մէջ առ-
տուածաշուն միտք խաղաղութեան մասին, որ
այնքան գեղեցիկ կերպով արտայայտված
է լեռնային քարոյի մէջ: Լուստի, ագիւր
կոմա, խնդրում եմ ձեզ մի լաւ չարագորու-
թիւն գրել պատերազմի դէմ: Իմ ամենախո-
րին համոզմունքով, պատերազմը—դա մի եւ
նոյն առեւտուր է մեծ չափերով, փոքրամե-
ր եւ հօգր մարդկանց առեւտուր, որի առաք-
կան ազգերի բախտն է: Եւ սրպիսի սար-

պատմում է տխուր ռեյտատիվով, աշխատ-
լով պահպանել երգի ինքնատիպ հարթավայ-
րային մեղեդին (степная мелодия) եւ սարա-
փելի կերպով աղճատելով ոտներէն խօսքերը:

I
«Բարձր, շատ բարձր սարն ի վեր կլաւ իժը
սողնաձի եւ պառկեց այնտեղ մի խոնաւ ձո-
րում, կուտալով գալով եւ ծովին նայելով:

«Բարձր, շատ բարձր երկնակամարում շողում
էր արեւը, եւ տօթ էին նշում սարերը գէպ
երկինք, եւ զարկվում էին ներքեւում ալիք-
ները քարերին:

Եւ ձորի միջով, ոտոտանելով քարէքար,
սլանում էր գէպի ծովը մի հեղեղատ, խաւա-
րամած ու ցայտուն:

Ամբողջ փրփում, ալեւոր ու հուժկու, նա
պատռում էր լեռը ու թափվում ծովը, գոռ-
գոռալով զայրազին:

«Յանկարձ այն ձորը, ուր զայրվել էր օձը,
ընկաւ երկնքից մի Բագէ՛ ջարդված լանջով,
արնաթաթախ փետուրներով...»

«Կարճ ձիւ արձակեց նա դետին ընկնելիս և
անդօր զայրոյթով ծեծում էր կուրծքը ժեռ
քարին...»

«Վախեցաւ իժը, չտալ յետ սողաց, բայց
չուտ հասկացաւ, որ մէկ-երկու րօպէ է միայն
մնում ապրելու թշուոնին:

«Սողնաձի մօտեցաւ ջարդված թշուոնին և
Փշաջրեց ուղիղ երեսին:

—Հը, մեռնում ես:

—Հա, մեռնում եմ,—պատասխանեց Բագէն,
հոգոց հանելով սրտի խորքիցը.—Հիւսնալի՛ օպ-
րեցի... Ես գիտեմ, թէ ինչ է կրճանկութիւնը...
Ես կտիւ մղեցի քաջերի նման... Երկինքը տե-
սալ... Գու չես տեսնի երկինքը այդքան մօտի-
կից... Խեղճ արարած:

—Ի՞նչ բան է երկինքը,—մի դատարկ տեղ...
Ի՞նչպէս պէտք է սողած այնտեղ, Չէ, այստեղ

սափներ անէք, որ չը կան այդ առեւտրի մէջ: Ես երբեք չեմ մոռնալ զբանս, այդ աղիոցորմ հեծեմանքները, որոնք թափանցում են մինչեւ ոսկորների ծովը:

...Բաւական է մի հայեացք գցել չարչիւնների կեանքի եւ գործունէութեան վրա, եւ իսկոյն յայտնի կը դառնայ թէ որքան անշնչեցող նրբութեամբ են այդ մարդիկ աշխատում յաղթել միմեանց խորամանկութիւններով: Եթէ մարդկանց ճշմարիտ բարեկամը սկսէր գիտել թէ ինչպիսի ծամածուծութիւններով այդ խղճուկ մարդիկ աշխատում են միմեանց խաբել, նա կարող էր ծիծաղել: Եթէ այս բոլորը այնքան աստիկ տխրալ չէ լինէր: Եւ սակայն, աղքատներից պահանջվում է ամենակատարեալ ազնուութիւն...

Ի՞նչու են կարծում, թէ չարն ու բարին հասկանալու համար պէտք է շատ բան սովորած, աշխարհի մէջ դիրք գրաւած, գիտութիւն ստացած լինել: Ազնիւ, բարի հողին, որ այսօր քան գեղեցիկ կերպով ըմբռնում է անարդարութիւնները, կարող է ծածկված լինել եւ մեծ մասամբ ծածկված էլ լինում է բանտերի, արհեստանոցի կամ մոռացված հին զինուորի շորերի տակ: Նապոլէօնը զինուորներին համարում էր թշնամութեամբ միաս: Աշխարհակալների այդ արհամարհայից հասկացողութիւնը փոքր, անհշտ մարդկանց մասին՝ ջնջում է այս գերմանացի գիտնորը իր անարուեստ, խտակմարդկայնական բողբոջով: Եւ ո՞վ գիտէ, քանի քանի այսպիսի ազնիւ սրտեր են բարակում այժմ հարաւային Աֆրիկայում, այն մարդկանց չարքերի մէջ, որոնց Լոնդոնի բօրսան ուղարկել է կոտորվելու եւ ոսկի հանքեր նուաճելու համար: Սրտերը զգում են, խօսում է մարդկային խիղճը, նա ամեն տեղ բողբոջում է, ամեն տեղ վրդովում է: Բայց աշխարհի հզօրները այժմ արհամարհում են նրան. բայց կը կարողանան միշտ արհամարհել...

ՆԱՄԱԿ ԹԵՂՈՒՍԻԱՅԻՑ

Ապրիլի 10-ին

Ծովի երգիչ Այվազովսկին մեռաւ 83 տարեկան հասակում, մինչեւ վերջին շունչն աշխատելով իր սիրած Թէոդոսիա քաղաքում, ծովից ու փոթորկից անբաժնի: Թէոդոսիան նրան չէր ճանաչում իբրեւ համաշխարհային հռչակ վայելող նկարչի. գիտէր որ նա «մեծ մարդ» է, իր հայրը, տէրն ու բարերարը, ուստի ողբաց եւ սղբում է իր հօր կորուստը: Ամբողջ քաղաքի բնակիչները, առանց խորութեան ազգութեան եւ կրօնի, լայն էին ու հեկեկում, իրանց որը գլուխը վայ տալիս: Հէնց որ մահվան գոյժը տարածվեց, սկսեցին զօղանջել քաղաքի բոլոր եկեղեցիների զանգերը՝ հայոց, յունաց, ռուսաց: Ամբողջ քաղաքը վարանման ու չարժման մէջ էր, օրական մի

շատ լաւ է ինձ համար... տաք է ու խոնավ: Այսպէս պատասխանեց իժը ազատ թռչունին եւ ծիծաղեց սրտում նրա վրա այդ դառնացմանքների համար:

«Եւ մտածեց ինքն իրան՝ «Կուզեա թո՛ր, կուզեա սողա, վերջը մէկ է,—ամենքս էլ հողի բաժին ենք լինելու, ամեն ինչ փոշի է դառնալու»...

«Բայց խիղախ Բագէն ցնցվեց յանկարծ, բարձրացաւ մի քիչ, աչք անեց ձորին:

«Գորշ քարի միջով ծորում էր ջուրը, եւ խեղդուկ էր օդը խաւար ձորի մէջ, եւ փռած հոտ էր կանգնած չորս կողմով:

«Եւ ձայնեց Բագէն կարտով ու կսկիծով, բոլոր ուժերը հաւաքած:

—Ա՛խ, գոնէ մի անգամ էլ բարձրանայի երկինք... կը սղմէի թշնամուս... կըծքիս վերքերին եւ... կը խեղդվէր նա արեւնս ծծելով... Օ՛ր մարտնչելու երջանկութիւն...

«Իսկ իժը մտածեց. «Երեւի ճիշդ որ քաղցր է երկնքում ապրելը, որ սա ախ է քաշում այսպէս»...

«Եւ առաջարկեց նա ազատ թռչունին՝ «Արի՛, մօտեցիր ձորի եզերքին եւ ներքեւ նետվիր»:

«Գուցէ թեւերդ քիչ վեր բարձրացնեն եւ մի փոքր ժամանակ էլ կարողանաս ապրել քո սիրած տարրում:

«Եւ ցնցվեց Բագէն, թոյլ ճիւղ արձակեց եւ գնաց դէպի գահավեժը, սղջալով ճանկերով լորձիւնոտ քարի վրայով:

«Եւ մօտեցաւ նա, պարզեց թեւերը, շունչ քաշեց լիաթոք, ցլաջրեց աչքերը եւ նետվեց ներքեւ:

«Եւ քարի նման գլորվելով ժայռ-ժայռ, ընկնում էր նա արագ, ջարդելով թեւերը, թափելով փետուրները...

«Հեղեղատի ալիքը ներս առաւ նրան, լուսաց արեւը, պատեց փրփուրով եւ տարաւ ծովը:

քանի անգամ հոգեհանգիստ էր կատարվում: Ստացվում էին բազմաթիւ պատկերներ զանազան ընկերություններից, հիմնարկություններից եւ յայտնի անձնավորություններից, տեղական բոլոր ուսումնարաններից՝ հայ, կարայի, հրէայ համայնքներից, Եւրոպայի հայ համայնքից եւ Այվազովսկուն պատկանող Շէյխ-Մամայ եւ Սուբաշի գիւղում ապաստան գտնող թուրքահայ գաղթականներից:

Թաղման նախընթաց օրը խորհն կախկույտ Ստեփանէն ամբօն բարձրացաւ, յուզված եւ ողբաձուց դառնալով ներկայ եղողներին, առաջ ռուսներին ինքուր՝ «Ինչ անեմ, արդէն տեսնում եք ձեր առաջ մեր բոլորի սիրելի Յովհաննէսին, հռչակաւոր Այվազովսկուն, ճշմարիտ քրիստոնեային եւ ժողովրդի հօրը: Թողնե՛ք, որ սա հռչակված նկարիչ էր, այսուհանդերձ նա չէր մոռանում իր մարդկային քրիստոնեական պարտականութիւնը: Ձէ եղել մի աղէտ, սրածութիւն կամ սով, որ արձագանք չը գտնէր հանգուցեալի սրտում... Միշտ թշուառները բարերար ու հայր է եղել եւ օգնել իր համեստ նուէրներով: Նրա Շէյխ-Մամայի եւ Սուբաշի գիւղերում արդէն տարիներից ի վեր ապաստան են գտնում թուրքահայ գաղթականները, եւ օրհնում են իրանց բարեբախտը:

Դադաղի առջեւ խօսեց նաեւ տեղիս գիմնադրանքի ղեկավոր Գրօլին, չեչուելով, որ աշխատանքը մարդուն միշտ առաջ է տանում: Հանգուցեալ Այվազովսկին փոքրիկ ընտանիքից մեծ դուստի դորձաւ: չորհիւ աշխատանքի եւ իր ազդանդին: Եւ իրաւ, նրա ամենավերջին «Պայթումն» նկարը մահվանից մի երկու օր առաջ էր սկսած:

Աւելորդ չէր լինի նաեւ մեր կողմից աւելացնել մի քանի խօսք Այվազովսկու դէպի հայերը տածած սիրոյ մասին, մանաւանդ վերջին մի քանի տարիներում, երբ Թուրքիայում տեղի ունեցան վերջին գազանութիւնները: Այս տպաւորութեան տակ նկարեց հանգուցեալը «Տրապիզոնի կոտորածը» եւ «Պոսի կենդանի ապրանքներ» նկարները: Ուրախ ու զուարթ դէմքը թափած էր արտայայտում այն փայլին, որը թիրաբեւոյ գաղթականները պատմում էին քան ահուկի եւ սարսափելի տեսարանների մասին, որոնք տեղի ունեցան 96 թվականներին... Տողերիս գրողը շատ անգամ էր նկատում, թէ ինչպէս արցունքներ էին ցայտում ծերունու աչքերից, երբ թուրքահայ յուզված պատմում էր իր քոյրերի առեւտնաման եւ որդիների կոտորման մասին: Հանգուցեալը տանջվում էր, տեսնելով որ չէ կարողանում օգնել իր համաբուհ եղբայրներին եւ միայն յոյս էր տալիս, ասելով՝ «Դուք աշխատեցէ՛ք նորից ձեր հայրենիքը վերագտնալ. ծաղկեցրէ՛ք ձեր արեւնոտ

«Իսկ ծովի ալիքները զարկվում էին քարին տխուր մունջալով... Եւ չէր երեւում թռչունի դիակը լայնածաւալ ծովում...

II

«Ձորի մէջ պառկած, երկար ժամանակ մտածում էր իժը Բագէնի մասին, նրա մահվան մասին, դէպի երկինքը տածած վառ սիրոյ մասին: «Եւ ահա նայեց նա դէպի երկնային հեռատունը, որ փաղաքշուտ է միշտ մեր աչքերը երջանկութեան երազով:

—«Տեսնես ինչ էր երեւում Բագէնի աչքին այդ անառակ ու աներբ անապատում: Ինչեւ նրա նմանները, մեռնելով, խռովում են մեր հողիները իրանց սիրով դէպի երկնային թըռիչները: Ի՞նչ բան է պարզվում նրանց համար այնտեղ: Ձէ որ ես կարող էի իմանալ այդ բոլորը, թռչնով երկինք գէթ կարճ ժամանակով:

Ասաց ու արեց: Օղակ կազմելով, նա թռաւ օդը եւ շողողաց արեւում նեղ ժապաւէնի պէս:

«Ո՞վ որ ծնվել է սողալու համար՝ չէ կարող թռչել: Նա մոռացել էր այդ եւ ընկաւ քարերի վրա, բայց չը ջախջախվեց, այլ ծիծաղեց ինքն իրան...

—«Ա՛յս է եղել ուրեմն երկինք թռչելու քաղցր հրապոյրը: Վայր ընկնելուն է այդ քաղցրութիւնը... Ծիծաղելի թռչունները երկիրը չը ճանաչելով, նրա երեսին կարօտից մաշվելով, նրանք ձգտում են միշտ դէպի բարձր եւ կեանք են փնտրում երկինք կոչված հրատապ անապատում: Դատարկ տարածութիւն է լուկ այնտեղ: Լոյս շատ կայ այնտեղ, բայց չը կայ այնտեղ ուտելիք եւ չը կայ նեցուկ կենդանի մարմնի համար: Ել ինչ են հպարտանում: Ել ինչ են ուրիշներին յանդիմանում: Անշուշտ որդէն զի սքողեն դրանով իրանց իղձերի անմտութիւնը եւ ծածկեն իրանց ան-

դաշտերը... Մի յուսահատվէ՛ք, աշխատեցէ՛ք, երեւի մի օր կը պարզվի մութ հօրիզոնը եւ կը տեսնէք պայծառ արշալոյս... Եւ...» Եւ նրա մօտից հանգիստ ու անգործ սրտով դուրս էր գալիս խղճ թուրքահայը...

Թաղման հանգէ՛ք շատ փառաւոր անցաւ: Առաւօտեան ժամի 8-ից արդէն ամբողջ քաղաքի բնակիչները խմբված էին Խաղիանակայա կոչված փողոցում: Հանգուցեալի բնակարանից մինչեւ հայոց ս. Սարգիս եկեղեցին փողոցը ամբողջ երկարութեամբ սեւ քօղով էր ծածկված: Հոգեհանգստի վերջը, որ կատարեց Խորէն եւ պիսկոպոս Ստեփանէն, սկսվեց յուզարկաւորութիւնը: Երգում էր Թէոդոսիայի քառածայն խումբը: Փողոցի այս ու այն կողմը հազարաւոր մարդիկ մեծ պատ էին կազմել, որոնց միջից անցնում էին հոգեւոր դասը, քաղաքային ճանաւորներն ու հանգուցեալի որդիքն ու ազգականները: Մի քանի տեղ հոգեհանգիստ կատարելուց յետոյ առաջ գնացին դէպի ս. Սարգիս եկեղեցին, որտեղ պատրաստված էր եւ հանգուցեալի դամբարանը: Պատարագին էր խորհն կախկույտը: Պատարագի վերջը հոգեհանգիստը շրջապատեց դամբարանը՝ հրաժեղով վերջին ողջմիտ տալու իրանց հայրենիքի: Դամբարանի առաջ խօսեց քաղաքագլուխ Դուրանդէ եւ վերջացրեց ասելով. «Մենա բարեւ փառք եւ պարծանք մեր քաղաքի, հայր ժողովրդի եւ մեր ազնիւ քաղաքացի: Դու անունն ու կյանատակը մեր մէջ կտեսնան անմոռաց կը մնայ, միաս բարեաւ...»:

Խուլ հառաչներ էին լսվում ժողովրդի միջից, որ եւ քամին հասցնում էր ծովը, ալիքներին լուր տալու, իրանց անմահ երգչի մահվան մասին...

Հանգուցեալ Այվազովսկին մօտ 40 հազար ռուբլիանոյ այդի է կտակել տեղիս հայ եկեղեցիներին:

Թ. Խանոյան

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Ապրիլի 30-ին

Վերջին տարիների անբերրութիւնը եւ երաշխայն քանքան վախեցրել են մեր առանց այն էլ խղճ ժողովրդի աչքը, մանաւանդ սարահարթերում, որ կարծէք ամենքը կորցրել են հաւատը դէպի երկինքը: Բաւական է մի երկու օրվայ չորութիւն, որ յուսահատութեան ստուեր անցնէ ժողովրդի դէմքի վրայով, եւ նա այնքան զգալուն է դարձել, որ օգաչափի ճշդութեամբ հետեւում է օդերեւութաբանական փոփոխութիւններին: Ապագայ բերքի մասին այժմանից ոչինչ չէ կարելի ասել: Ճիշդ է, այս ձմեռը ձիւնի կողմից բարեկալոյ էր, առատ կերպով տեղացող ձիւնը հաստ չերոտվ

պէտքութիւնը կենսական գործերի համար: Ծիծաղելի թռչուններ... Բայց էլ չեն լսարի ինձ նրանց խօսքերը: Այժմ ես ինքս ամեն բան գիտեմ: Տեսայ երկինքը... Թոյս այնտեղ, չափերի նրա տարածութիւնը, ճանաչեցի, թէ ինչ է անկումը, բայց չը ջախջախվեցի, այլ միայն աւելի շատ սկսեցի հաւատալ ինքս ինձ: Թող նրանք, որոնք չեն կարող սիրել գետինը, ապրեն պատրանքով... Ես գիտեմ արդէն ճշմարտութիւնը: Եւ նրանց կոչելին էլ չեմ հաւատալ: Հողածին եմ եւ եւ հողով եմ ապրում:

«Եւ կուտապ եկաւ նա քարի վրա, հպարտ իր անձով:

«Փայլում էր ծովը պայծառ արեւում, եւ գոռ ալիքները զարկվում էին ափին:

«Նրանց մոնչման մէջ որոտում էր երգը հպարտ թռչունի մասին, զողում էին ժայռերը նրանց թռիչքից, զողում էր երկինքը նրանց գոռ երգից:

«Մենք փառք ենք երգում քաջերի խնթութեան:

«Քաջերի խնթութիւնն է կեանքի իմաստութիւնը: Օ՛վ խիղախ Բագէ: Արեւաքաղ եւ զար կուտելով թշնամիներից հետ... Բայց կը գայ մի օր—եւ ջերմ արեւնիդ քաղցր կաթիլները կաթիլի նման կը բոցավառվեն կեանքի խաւարում եւ շատ խիղախ սրտեր կը բորբոքեն ազատութեան եւ լոյսի անմիտ ծարաւով: «Շատ էլ դու մոռում... Բայց հողով անվիճարները եւ հզօրները երգում դու միշտ եւ միաս կենդանի օրինակ եւ իբր գոռոց կոչ դէպի լոյս, դէպի ազատութիւն:

«Մենք փառք ենք երգում քաջերի խնթութեան»...

...Լուռ է ծովի արեւակնազոյն հեռատունը, մշտադաճօրէն մրմնջում են ալիքները, շղկով աւազը, եւ ես անխօս նայում եմ Ռահիմին, որ

ծածկել էր սար ու ձոր, ճանապարհները օրեւրով փակված էին մութ, քաղաքում ամիս ու կէսից աւելի սահալներ էին բանում, բայց այդ գարունը նոյնպէս վատ չանցաւ: մարտ եւ ապրիլ ամիսների ընթացքում որքան հարկաւոր էր, անձրեւներ տեղացին, բայց, կրկնում ենք, այժմանից որոշ կարծիքներ յայտնել չէ կարելի, չը նայած որ առայժմ թէ ցանքերը եւ թէ սարերի խոտը լաւ են: Մինչեւ հունձը դաշտային մասերում երկու ու կէս եւ սահարաններում երեք ու կէս ամիսից աւելի կայ, իսկ մինչեւ այդ, ո՞վ գիտէ ինչ փոփոխութիւններ տեղի կունենան:

Մենք երբեք չենք կարող մոռնալ անցեալ 1899 թվ. փոփոխական դրութիւնը. թէպէտ ձմեռը ձիւնի կողմից վատ էր, բայց գարունը անցաւ հիւսիսի. նոյն իսկ ապրիլ եւ մայիս ամիսները այն աստիճան լաւ անցան, որ կարծէք երկինքը թափում էր պատէրով անձրեւներ: Մայիսի վերջերում, նահանգի համարեա բոլոր կողմերում ցանքերը հրաշալի էին եւ ապավում էր չը տեսնված բերք, ժողովուրդը յափշտակված էր իր ցանքերով: Եւ ահա մասիսի յաջորդում են յունիս եւ յուլիս ամիսները, երկինքը քաղաքում է, սարսափելի չեղք եւ խորշակները այրում են ամեն ինչ եւ զուգացու յոյսերը չիք են դառնում: Շատ տեղեր մանրագ չը բանեց, իսկ բանած տեղերի բերքը սպասածի քառորդից էլ քիչ եղաւ: Ահա այսպիսի օրինակները ստիպում են կանխօրէն ոչ մի կարծիք չը յայտնել, սպասելով յետագայ ամիսների փոփոխութիւններին: Միայն այժմից այս կարելի է ասել, որ ցանքերն այս տարի համեմատաբար քիչ են միւս տարիներից: Պատճառը հասկանալի է. ցորեն եւ գարին այն աստիճան թանգ են, որ շատ դաւաններում ուտելու հաց հայթայթելը նոյն իսկ ծանր դրութեան մէջ էր դրել ժողովրդին, իսկ սերմացու ձեռք բերելը աւելի եւս դժուարին:

Ծորերի գինը մինչեւ ապրիլի կէսը 40—38 ռուբլեց չիլաւ. իսկ գարին մինչեւ այժմ էլ սարսափելի թանգ գնեցով է վաճառվում: Կառող էք երեւակայել, որ գարու խալվարը վաճառվում էր 35 ռուբլով, այսինքն ցորենի գընով: Սա բացատրվում է նրանով, որ գարին բոլորովին ապաստվել է եւ մեծ դժուարութեամբ է ձեռք բերվում, իսկ ցորեն գետ եւ կայ մասնաւոր ձեռքերում, սրան ապացոյց է այն հանգամանքը, որ ապրիլի սկզբում տեղացող անձրեւեց յետոյ ցորենի գինը մի երկու ռուբլով պակասեց, մինչդեռ գարու գները վրա ազդեցութիւն չարեց: Եթէ մի քանի անգամ եւս անձրեւներ տեղան, հաւանականաբար ցորենի գինը զգալի չափով կիջնէ: Վերջին անձրեւները տեղային համարեա ամեն տեղ, իսկ Դարբա՛նից մասում՝ նոյն իսկ փառաւոր ձիւն եկաւ:

վերջացրել է իր երգը Բագէի մասին: Ջրի երեսին շատանում են հեռագիտէ արծաթէ պոյտերը լուսնի շողերից... Մեր կաթնամս սկսում է մեղմ ետալ:

Ալիքներից մէկը խաղա ընկած սահում է ափն ի վեր եւ խորտաբար աղմկվելով սողում է դէպի Ռահիմի դուռը:

—Ո՛ր ես քչում... Կորի գնա,—ձեռով վանում է նրան Ռահիմը, եւ նա հլու կերպով յետ է գործում դէպի ծովը:

Ալիքներին հոգի վերաբողջ Ռահիմի այդ վարմունքը ինձ ոչ ծիծաղելի է թւում, ոչ սարսափելի: Ամեն ինչ մեր շուրջը տարօրէն կենդանի է թւում եւ մեղմ ու փաղաքշի: Ծովը ինչ որ վերին աստիճանի ազդու անդորրութիւն ունի, եւ զգացվում է, որ նրա զով չնչի մէջ դէպի գետ ցերեկվայ տապից չը ստնած սարերը թափված է մեծ ոյժ՝ հզօր ու զսպված: Մուգ-կապոյտ երկնքի վրա աստղերի ոսկէ նախշով զրկված է ինչ որ մի հանդիսաւոր բան, որ թուրում է մարդու հոգին եւ հրապուրում միտքը քաղցր ակնկալութեամբ ինչ որ յայտնութեան:

Ամեն ինչ նիւհում է, բայց նիւհում է լարված սթափութեամբ, եւ թւում է, թէ ահա մի րոպէ անց ամեն ինչ կը ցնցվի, տարածելով շուրջը հրաշալի ներդաշնակութիւն անասելի քաղցր հնչիւնների: Այդ հնչիւնները կը պատմեն մեզ եւ կը մեկնեն մեր առթեր տիեզերքի քաղաքները, իսկ յետոյ կը հանգչեն տիեզերքը իբրեւ մի մոլեռնիկ հօր, եւ կը թոցնեն մեր հոգին բարձր, բարձր դէպի մուգ-կապուտակ անդունդը, որտեղից աստղերի զոդողուն նաչխերն էլ կը հնչեցնեն նրան ի հանդէպ հրաշալիք երաժշտութիւնը յայտնութեան...

S. Յովհաննիսյան

